

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ  
Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը

ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ԱՐԲԻՏՐԱԺԱՅԻՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՃԱՆԱՉՄԱՆ ԵՎ  
ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻՆ ՄԻԱՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովը ո ր ո շ ու մ է.

Միանալ 1958 թվականի հունիսի 10-ին Նյու Յորք քաղաքում ստորագրված  
„Օտարերկրյա արբիտրաժային որոշումների ճանաչման եւ կատարման մասին,,  
կոնվենցիային հետեւյալ հայտարարությամբ`

1. Հայաստանի Հանրապետությունը սույն Կոնվենցիան կիրառելու է միայն այն  
արբիտրաժային որոշումների ճանաչման եւ կատարման նկատմամբ, որոնք կայացվել են  
մյուս Պայմանավորվող պետությունների տարածքում:

2. Հայաստանի Հանրապետությունը սույն Կոնվենցիան կիրառելու է միայն  
պայմանագրային կամ այլ իրավահարաբերություններով ծագող այն վեճերի նկատմամբ,  
որոնք Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ համարվում են առեւտրային:

18 նոյեմբերի 1997 թվականի,  
Ն-210-1